«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝«Երաժշտառիթմական վարժությունները, որպես երեխայի ռիթմի զգացողության միջոց»

Դաստիարակ՝ Աննա Հակոբջանյան

Մանկապարտեզ՝«Խաշթառակի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------3-4 էջ
ԳԼՈՒԽ 1. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱՐԱՐ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՈՒՆ----------5
1.1. Չափորոշիչները և հիմնարար հասկացությունները, որպես երաժշտառիթմական գործունեության հիմք----------5
1.2. Երաժշտառիթմական գործունեության տեսական հիմունքները----------8

ԳԼՈՒԽ 2. ԵՐԱԺՇՏԱՌԻԹՄԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԵԹՈԴՆԵՐ և ՏԵԽՆԻԿԱ----------14
2.1. Երաժշտառիթմական շարժումների կարողությունների աստիճանական զարգացում----------14
2.2. Ուսուցման արդյունավետ մեթոդների և տեխնիկայի ընտրություն--------16

ԳԼՈՒԽ 3 ԵՐԱԺՇՏԱՌԻԹՄԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ----------
3.1. Երաժշտառիթմական պարապմունքների պլանավորում---------- 18
3.2. Երաժշտական պարապմունք միջին խմբում----------19
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ----------21
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ---------- 23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երեխաների ֆիզիկական և հոգեբանական առողջության պահպանման համար մեծ նշանակություն ունի նրանց ստեղծագործական ներուժի ակտիվացումը, որոնման, ուրախության, հաճույքի մթնոլորտի ստեղծումը, երեխաների անհատական կարիքների և հետաքրքրությունների բավարարումը, անհատականության զարգացումը: Երաժշտությունն ու շարժումը միջոցներ են, որոնք բարենպաստ ազդեցություն են ունենում երեխայի առողջության վրա: Երաժշտական և ռիթմիկ շարժումները կատարում են թուլացման գործառույթ, օգնում են հասնել հուզական ազատության, թեթևացնում են հոգեկան ծանրաբեռնվածությունը և հոգնածությունը: Այն ռիթմը, որը երաժշտությունը թելադրում է ուղեղին, թուլացնում է նյարդային լարվածությունը: Շարժումն ու պարը որպես միասնական զբաղմունք երեխային օգնում են ընկերանալ այլ երեխաների հետ և ունեն որոշակի հոգեթերապևտիկ ազդեցություն:

Ուսումնասիրելով նախադպրոցական տարիքի երեխաների երաժշտական ունակությունների, երաժշտական հակումների զարգացման խնդիրը՝ մենք դիմում ենք ոչ միայն երաժշտության, այլև ընդհանրապես կյանքի ռիթմիկ կազմակերպմանը: Ռիթմն ապրում է ամեն ինչում՝ եղանակների փոփոխության, ծննդյան և մահվան փոփոխության, բարու և չարի, սպիտակի և սևի փոփոխության մեջ: Մարդու քայլերը, շնչառությունը և սրտի զարկերը որոշակի ռիթմով են՝ չորս զարկի չափով: Հոգեբանները նկատել են, որ ռիթմիկ զգացողությունը առաջնային է, սկզբնական և տարրական, հետևաբար այն երաժշտականության հիմնական հատկությունն է: Այս ամենով է պայմանավորված թեմայի ընտրությունը:

Թեմայի **արդիականությունը** պայմանավորված է նրանով, որ այսօր նախադպրոցական կրթության նոր օրենքի ընդունումը, չափորոշիչների ստեղծումը և վերջնարդյունքների ձևակերպումը դաստիարակների համար հիմք են հանդիսանում վերահմաստավորելու իրենց գործունեությունը, հստակեցնելով և չափելի դարձնելով դրա որակը և արդյունավետությունը:

Մեր հետազոտական աշխատանքի **նպատակն է՝** երաժշտառիթմական վարժությունների ուսումնասիրությունը որպես սինթետիկ գործունեության, որը նպաստում է երեխայի երաժշտական լսողության, շարժողական ինչպես նաև մտավոր ունակությունների և ռիթմի զգացողությանը:

Այս նպատակի իրականացման համար ձևակերպվել են հետևյալ **խնդիրները՝**

- նախադպրոցական դաստիարակության վերաբերյալ հիմնարար փաստաթղթերի ուսումնասիրություն (ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ, ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԸ):
- Մասնագիտական գրականության ուսումնասիրություն:
- Խնդրին վերաբերվող հիմնական հասկացությունների ուսումնասիրություն:
- Երաժշտառիթմական պարապմունքի պլանավորում և իրականացում:

Հետազոտության արդյունքում ակնկալում ենք հարցի վերաբերյալ ունենալ տեսական ուսումնասիրություն, գործնական պարապմունքի պլանավորում, որի հիմքում դրված են երաժշտառիթմական վարժությունների իրականացման ժամանակակից մոտեցումները:

ԳԼՈՒԽ 1. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱՐԱՐ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՈՒՆ

1.1 Չափորոշիչները և հիմնարար հասկացությունները, որպես երաժշտառիթմական գործունեության հիմք

Ժամանակակից հասարակությունում տեղի ունեցող զարգացումները իրենց արձագանքն են գտնում կրթության քաղաքականության մեջ: Այսօր ԿԳՄՍ նախարարության կողմից իրականացվում են մի շարք փոփոխություններ, որոնք համահունչ են հասարակության և գիտության նոր մոտեցումներին: Այդ փոփոխությունները արտացոլված են ՀՀ նախադպրոցական կրթության մասին օրենքում և Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչում, սակայն այս ամենը պետք է դառնա գործողությունների պլան և իրականացվի մանկավարժական գործընթացում: Թեմայի շրջանակում մենք պարզեցինք մեր անելիքը, որը բխում է այդ փաստաթղթերից: Մեզ հարկարևոր էր պարզել նպատակները և դրանից բխող վերջնարդյունքները:

«1. Նախադպրոցական կրթության նպատակներն են՝

ա) երեխայի ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանումն ու ամրապնդումը.

բ) նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը.

գ) դպրոցական ուսուցմանը նախապատրաստումը:»[1]

Մեր թեմայի ուղղվածությունը բխում է առաջին երկու ձևակերպումներից, ինչը կապված է խնդրի արդիականության հետ: Հաջորդ փաստաթուղթը, որը մենք ուսումնասիրեցինք, նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչն է, որը մեզ ուղորդում է մեր գործընթացներում իրականացնել այնպիսի մոտեցում, որը հիմնված է երեխաների կարողունակությունների վրա:

«1. Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը (այսուհետ՝ չափորոշիչ) հանրակրթության պետական կրթական չափորոշչի բաղկացուցիչ մաս կազմող նորմատիվ իրավական ակտ է, որը սահմանում է նախադպրոցական տարիքի երեխաների (ըստ տարիքային խմբերի) զարգացման կրթական ծրագրերի

[1] ՀՀ Օ Ր Ե Ն Ք Ը ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
Հոդված 6. Նախադպրոցական կրթության նպատակները և խնդիրները

բովանդակությունը, նրանց ներկայացվող վերջնարդյունքները, ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը, նախադպրոցական տարիքի երեխաների կրթության և զարգացման վերջնարդյունքի ապահովման հիմքերը:

2. Չափորոշչի հիմքում նախադպրոցական տարիքի երեխաների կարողունակությունների վրա հիմնված մոտեցումն է:»[2]

«4. Չափորոշիչը երեխայակենտրոն կրթության հիմքն է. այն հնարավորություն է ընձեռում արձագանքելու երեխաների կարիքներին և հետաքրքրություններին, հարգելու յուրաքանչյուր երեխայի անձը, խթանելու համատեղ ուսումնառության գործընթացը»:[3]

Չափորոշիչների հիման վրա հստակ ձևակերպված են նախադպրոցական տարբեր տարիքային խմբերի երեխաների զարգացման վերջնարդյունքները, որոնք նպաստում են պարապմունքների հստակ պլանավորմանը: Մեր ուսումնասիրած ոլորտի համար վերջնարդյունքը սահմանված է հետևյալ կերպ՝ «է. կատարում է պարային շարժումներ՝ դրսևորելով ռիթմի զգացողություն և ռիթմոպլաստիկ շարժողական կարողություն, ը. օրվա ռեժիմի ընթացքում կատարում է նմանողական շարժումներ և ընդհանուր զարգացնող վարժություններ»:[4]

Երաժշտառիթմական շարժումները սինթետիկ գործունեություն են, հետևաբար երաժշտության շարժումների վրա հիմնված ցանկացած ծրագիր կարող է զարգացնել՝ երաժշտական լսողության, շարժողական ինչպես նաև մտավոր ունակությունները: Այնուամենայնիվ, կատարելով մեկ որոշակի գործունեություն, կարող ենք հետապնդել տարբեր նպատակներ, օրինակ՝ երեխաների ուշադրությունը կենտրոնացնել ռիթմի զգացողության, շարժողական հմտությունների զարգացմանը կամ արտիստիզմին և այլն՝ նայած թե ինչ նպատակով կամ ինչ պայմաններում է այս աշխատանքը կատարվում: Մեր կարծիքով, կարևոր է, որ դաստիարակը հետևի իր գործունեության առաջնահերթ նպատակներին և խնդիրներին, հասկանա, թե որն է հիմնական դերը:

---

[2] ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ, էջ 2, կետ 1, 2021թ.

[3] ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ, էջ 2, կետ 4, 2021թ. http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152575

[4] ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ, էջ 5, 6) ավագ խումբ (5-ից մինչև 6 տարեկան), 2021թ

Մեր հետազոտության իրականացման համար ուսումնասիրել ենք հետևյալ **հիմնական հասկացությունները,** որոնք հիմք են հանդիսանում թեմայի իրականացման համար՝

- **Ընդունակություններն** անձի այն ներհոգեկան առանձնահատկություններն ու դրանց համադրություններն են, որոնք թույլ են տալիս տիրապետել որոշակի գործունեության համարանհրաժեշտ գիտելիքների, կարողությունների ու հմտությունների և արդյունավետ կատարել այտ գործունեությունը: (Լ.Լ. Բոչկարև, «Երաժշտական գործունեության հոգեբանություն» գիրք):
- **Երաժշտական ունակությունները** առարկայի զգայական-հուզական և ռացիոնալ ֆունկցիոնալ հատկությունների ամբողջություն (համակարգ) են, որոնք դրսևորվում են երաժշտությանը նրա հուզական արձագանքման և երաժշտական գործունեության հաջող իրականացման մեջ: (B.M. Teplov, «Երաժշտական ունակությունների հոգեբանություն» գիրք):
- **Ռիթմը (**թարգմանաբար հունարենից՝ համաչափություն)՝ երաժշտության մեջ հնչյունների տարբեր տևողությունների փոփոխությունն է: Ռիթմի զգացումը երաժշտական ռիթմը ընկալելու և վերարտադրելու կարողությունն է հուզական չափանիշի (զգալու, լսելու կարողություն, խթան), շարժողական հմտությունների հիման վրա: Ռիթմի ընկալումը երբեք միայն լսողական չէ. դա միշտ լսողական-շարժիչ գործընթաց է:
- **Ռիթմի զգացումը** - երաժշտությունը ակտիվորեն զգալու, երաժշտական ռիթմի հուզական արտահայտչականությունը զգալու և այն ճշգրիտ վերարտադրելու կարողությունն է: Սա ռիթմիկան երաժշտական գործունեության այն տեսակներից է, որում երաժշտության բովանդակությունը, նրա բնավորությունը, պատկերները փոխանցվում են շարժումներով:
- **Երաժշտական-ռիթմիկ զգացողությունն** այնպիսի երաժշտական ունակություն է, առանց որի երաժշտական ցանկացած գործունեություն իրականում անհնար է, լինի դա երգել, նվագել, երաժշտություն ընկալել և ստեղծել:

Հաջորդ խնդիրը տեսական նյութի ուսումնասիրությունն է, որը պետք է նպաստի մեր գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

1.2. Երաժշտառիթմական գործունեության տեսական հիմունքները

Առաջադրվող հետազոտության մեջ անհրաժեշտ ենք համարում ամփոփ ներկայացնել ուսումնասիրվող խնդրի տեսական հիմունքները:

1. Երաժշտությունն ու շարժման միասնության գաղափարը գրավել է շվեյցարացի երաժիշտ, ուսուցիչ, դաշնակահար և դիրիժոր Էմիլ Ժակ Դալկրոզի (1865-1950) ուշադրությունը, որն արդեն 20-րդ դարի սկզբին ձևավորեց երեխաների երաժշտական և ռիթմիկ դաստիարակության համակարգը: Այն եվրոպական շատ երկրներում ինչպես նաև Ռուսաստանում ընդունվեց որպես «ռիթմիկ մեթոդ, մարմնամարզություն» և երաժշտական կրթություն անվան տակ արդիական է նաև մեր օրերում: Է.Դալկրոզի արժանիքն առաջին հերթին կայանում է նրանում, որ նա երաժշտական և ռիթմիկ վարժությունները երեխաների համար դիտել է որպես երաժշտական լսողության, հիշողության, ուշադրության, շարժումների արտահայտչականության, ստեղծագործական երևակայության զարգացման վստահելի ուղի: Նրա կարծիքով՝ «երեխայի կյանքի առաջին տարիներից պետք է դաստիարակել «մկանային զգացողություն», որն իր հերթին նպաստում է «ուղեղի կենդանի և հաջող գործունեությանը»[5]: Ըստ Ժ.Է.Դալկրոզի, երեխան նախ պետք է փորձի այն, ինչ պետք է հետագայում սովորի: Միևնույն ժամանակ, Դալկրոզը կարևոր համարեց երեխաների հետ կազմակերպել այնպիսի գործունեություն, որը պետք է «ուրախություն և խինդ պատճառի նրանց. հակառակ դեպքում կորցնում է իր արժեքի կեսը»: Ռիթմիկ վարժությունների համալիրում շվեյցարացի ուսուցիչն ընդգծեց, որ երաժշտությունը, ոչ միայն կազմակերպման իդեալական օրինակ է, այլև կարգավորում է երեխայի շարժումները և հստակ պատկերացումներ է տալիս ժամանակի, տարածության և շարժման միջև եղած հարաբերությունների մասին:

2. Ըստ երաժշտության տեսության և պատմության տված տեղեկությունների՝ Ե.Ժ.Դալկրոզի ռիթմիկ զարգացման հարցերը զարգացրել են գերմանացի կոմպոզիտոր և ուսուցիչ Կարլ Օրֆը(1895-1982), Ն.Գ.Ալեքսանդրովան, Ե.Վ.Կոնորովան, Ն.Ա.Վետլուգինան, Մ.Լ.Փալավանդիշվիլին, Վ.Ա. Գրիները, Է.Ա.

[5] С. М. Волконский «Воспитательное значение ритмической гимнастики Жак-Далькроза», «Листки…»№ 2, 1913

Ռումերը, Ա.Լ.Բուրենինան, Ժ.Ե.Ֆիրիլյովան, Տ.Ե.Տյուտյունիկովան, Ի.Գ.Գալանտը Ա.Վ. Քենեման, Ա.Ն. Զիմինան, Է.Ն. Սոկովնինան և ուրիշներ, որոնք որպես ոլորտի մասնագետներ համոզված էին, որ դաստիարակության և կրթության համար երաժշտությունն ավելի խորը նշանակություն ունի, քան հիմա ենթադրվում է, քանի որ միավորում է ոչ միայն հնչյունների ներդաշնակությունը, այլև պոեզիան, պարը, փիլիսոփայությունը և ստեղծագործությունը: Հատկապես Ժակ Դալկրոզի աշակերտներ և հետևորդներ Ն.Գ.Ալեքսանդրովան, Վ.Ա.Գրիները, Է.Ա.Ռումերը և այլք, ովքեր 1911թ. Դրեզդենում ավարտել են երաժշտության և ռիթմի ինստիտուտը, ավելի սերտորեն էին կապված այդ տեսությանը: Նրա հետևորդ ռուս ուսուցիչները հասկացան երաժշտության և ռիթմիկայի տարածման կարևորությունը որպես երեխաների և երիտասարդների համար երաժշտական կրթության ձև. նրանք մեծ աշխատանք կատարեցին նյութի հետագա գործնական զարգացման առումով: Նրանք ռիթմը բնութագրեցին որպես կենսասոցիալական կրթության միջոցներից մեկը և մանկավարժության, հոգեֆիզիոլոգիայի, աշխատանքի գիտական կազմակերպման, ֆիզիկական դաստիարակության, գեղարվեստական կապի կենտրոնում այն առաջադրեցին որպես դրանց զարգացման հիմք: Բազմաթիվ դասախոսություններում և հոդվածներում նրանք զարգացրին Դալկրոզի համակարգը, հատկապես ռիթմիկ վարժությունների թերապևտիկ ընկալումը: Հատկապես Ն.Գ.Ալեքսանդրովայի նախաձեռնությամբ, կազմակերպվեց Մոսկվայի ռիթմիստների ասոցիացիան, որը դպրոցների, տեխնիկումների, կոնսերվատորիաների կրթական ծրագրերի համար համակարգված զգալի գործնական նյութ մշակեց որպես ռիթմիկ պարապմունքներին ուղղված մեթոդական ցուցումներ: Մոսկվայի ռիթմիստների ասոցիացիայի անդամները (Ն.Գ. Ալեքսանդրովա, Վ.Ա. Գրիներ, Յու.Ա.Դվոսկինան, Է.Վ.Կոնորովան և այլն) իրավամբ հավատում էին, որ ամեն երեխա պետք է զբաղվի ռիթմիկ վարժություններով, որոնք բոլոր առումներով բարենպաստ ազդեցություն կունենան նրա վրա:

3. Երաժշտության ընկալման և ըմբռնման գործընթացում ռիթմի զգացումն ուսումնասիրելու պահանջը ավելի ուշ շրջանում հանդիպում է նաև Բ.Վ. Ասաֆիևայի,

Վ.Վ. Մեդուշևսկու, Է.Վ. Նազայկինսկու, Ա.Ն. Սոխորի, Բ.Մ. Թեպլովայի, Գ.Մ. Ցիպինայի մեկնաբանություններում:

4. *«Ուսուցիչ պարոններ ու քույրեր, զգուշությամբ և երկյուղածությամբ մոտեցեք դաստիարակության գործին. խիստ փափուկ պաշտոն մըն է ձերը: Դաստիարակելու կոչված եք սերունդ մը, որ ապագա ազգն է, սխալ ուղղությամբ՝ ազգ մը կը խորտակեք վերջը: Մանուկն ինչ զգացումի տակ որ ըլլա, այդ զգացումը կարտահայտե որոշ երգերով: Երգը ներքին հոգեկան զգացումին արտահայտության մեկ ձևն է, ուրեմն շարժում մըն է, և պարն էլ ինքնին շարժում մը ըլլալով, երգը կզուգորդի պարին հետ: Զգացումներն ինչ ուղղությամբ որ ընթանան, երգն ու պարն ալ նույն արտահայտությամբ երևան կուգան: Արդ կրնա ըմբռնվիլ, թե որքան կարևոր են մանուկին դաստիարակության մեջ երգեցողությամբ ընծայվելիք հոգածությունն ու պարտավորությունը» Կոմիտաս «Պարն ու մանուկը»:*[6]

Մանկավարժության մեջ վաղուց հայտնի է, թե դաստիարակության համար ինչ մեծ հնարավորություններ կան երաժշտության և ռիթմիկ շարժումների մեջ, ինչը ինտեգրում է գեղարվեստական գործունեության տարբեր տեսակները: Սա հայտնի էր դեռևս Հին Հունաստանում, որտեղ ձևավորվեց այն գաղափարը, որ գեղեցկության հիմքը ներդաշնակությունն է: Պլատոնի կարծիքով՝ «դժվար է պատկերացնել ավելի լավ կրթության մեթոդ, որը բաց և հստակված է դարերի փորձով. այն կարող է արտահայտվել երկու դիրքով՝ մարմնամարզություն՝ մարմնի համար և երաժշտություն՝ հոգու համար: Այս առումով երաժշտական կրթությունը անհրաժեշտ է և համարվում է ամենակարևորը. նրա շնորհիվ ռիթմն ու ներդաշնակությունը խորապես ներծծված են հոգու մեջ. տիրիր դրան, լցրու գեղեցկությամբ ու մարդուն դարձրու գեղեցիկ մտածող... Նա կհիանա գեղեցիկով, այն կընկալի ուրախությամբ, կհագենա դրանով և կհամակարգի իր կյանքը նրա հետ»:[7]

Հին Հունաստանում դաստիարակության և կրթության համար նախատեսված երաժշտության իմաստն ավելի խորն էր, քան հիմա, քանի որ այն միավորեց ոչ միայն հնչյունների ներդաշնակությունը, այլև պոեզիան, պարը, փիլիսոփայությունը, ստեղծագործականությունը: Հենց այս գաղափարներն են կարևոր մեր ժամանակների

[6] Կոմիտասի դասախոսությունը Պոլսի Յեսայան դպրոցում, 1912թ

[7] С.И.Радциг История древнегреческой литературы, М.: Высш. школа, 1982, 487 с

կրթության համար: Առանց այս ամենի աշխարհը շատ դժվար ու դաժան է թվում և հավանաբար բնական է, որ դաստիարակները ձգտում են երեխաներին դաստիարակել «գեղեցկության օրենքների» համաձայն: Գեղեցկությունն իրականություն դարձնելու համար Պլատոնի բանաձևը՝ «Գեղեցիկ պատկերներից մենք կանցնենք գեղեցիկ մտքերին, գեղեցիկ մտքերից՝ գեղեցիկ կյանքին և գեղեցիկ կյանքից՝ բացարձակ գեղեցկությանը», Հին Հունաստանի փիլիսոփաների մեջ բազմաթիվ հետևորդներ է ունեցել: Այսպիսով, երաշծության և շարժման սինթեզի գաղափարը կարևորվել է հին աշխարհից մինչև մեր օրերը:

Ի՞նչ բացահայտեցինք մեր ուսումնասիրության ընթացքում:

1. Անհրաժեշտ է տարբեր տարիքի երեխաների համար թարմացնել երգացանկը՝ այն համալրելով ժամանակակից երաժշտությամբ ու շարժումներով:
2. Ուսուցիչներն անընդհատ կարիք ունեն նոր նյութը հարմարեցնել երեխաների փոփոխվող կարիքներին, բնապահպանական խնդիրներին, կյանքին, և, վերջապես, աշխատանքում անընդհատ ինչ-որ նոր և թարմ բան ներմուծելու անհրաժեշտությանը:
3. Բայց, երևի երգացանկ մշակելը անվերջ գործընթաց է, իսկ ուսուցչի համար ավելի կարևոր է կենտրոնանալ երեխաների կոնկրետ հնարավորությունների ու նրանց զարգացման նպատակի ու խնդիրների վրա՝ դրանք հարմարեցնելով իր աշխատանքային կոնկրետ պայմաններին՝ անհատական շարժումները փոխելով այնպես, ինչպես ուսուցիչն ինքը մինչ այդ ներքուստ ընդունել է և կարողացել է դրանով գերել սաներին՝ միաժամանակ պահպանելով իր կերպարը, տրամաբանությունը, աշխատանքի ոճը:

Ի հայտ եկան և որոշ *հակասություններ,* որոնք կարելի է բնորոշել որպես նախադպրոցական կրթության ոլորտում ժամանակակից մանկավարժության *ա. նոր շահերի և գործող ծրագրերի ու մեթոդների հնացած մոտեցումների բախում, բ. նախադպրոցական տարիքի երեխաների երաժշտական և ռիթմիկ զարգացման վերաբերյալ մեթոդական գրականության, մի շարք մանկավարժական մեթոդների և տեխնիկայի մշակման բացակայություն, գ. Այն ամենը, ինչ ընդունված է արդի դասավանդման մեջ՝ 1. երաժշտական դասը բաժանված է գործունեության առանձին*

տեսակների, որտեղ երեխաները ամեն ինչ անում է առանձին՝ պարել, սերտել երաժշտական և գրական տեքստեր, անել պարային շարժումներ, լսել և վերլուծել երաժշտական ստեղծագործություններ, 2. երգել աթոռների վրա նստած, և այլն մասնագիտական գրականության մեջ անբավարար է համարվում երեխաների բնական ներդաշնակ և ամբողջական զարգացման համար:

Երաժշտական և ռիթմիկ ունակությունների զարգացումը ամբողջական գործընթաց է, որը պետք է իրականացվի բոլոր տեսակների համատեղ գործունեության մեջ:

Երաժշտառիթմական վարժությունների կատարումը պետք է բխի որոշակի **սկզբունքներից**, որոնց պահպանումը բոլոր երգացանկերում կարևոր է: Դրանք են.

1. Կենտրոնանալ երեխաների ոչ միայն զարգացման, այլև կատարելագործման վրա, դրանում ներառելով ուսուցչի պրոֆեսիոնալիզմը, ռիթմոպլաստիկ շարժումների, մանկավարժական գործունեության մեջ անհատական ոճի պահպանումը:
2. Որպես սկզբունք և՛ ձայնագրություններում, և՛ անմիջական, «կենդանի» կատարման ժամանակ պետք է ձգտել օգտագործել ամբողջական երաժշտական ստեղծագործություններ և ոչ թե դրանց զանազան հատվածները: Ամբողջական երաժշտական պատկերն ուղեկցվում է տարբեր պլաստիկ միջոցներով, որոնք պահանջում են ինչպես մարմնի ազատ վերահսկողություն, այնպես էլ երաժշտության բովանդակության ավելի խորն ընկալում՝ սուր ականջ և հարուստ երևակայություն: Պետք է անցնել պարզից դեպի բարդը՝ մանկական երգերից, ժողովրդական ստեղծագործությունների, ապա՝ դասական ստեղծագործությունների:
3. Որպես երրորդ սկզբունք սաների ու դաստիարակների համար անհրաժեշտ է պարապմունքը դարձնել երաժշտառիթմական՝ զարգացնելով ուշադրությունը, կամքը, հիշողությունը, շարժունակությունը և մտքի գործընթացների ճկունությունը՝ երաժշտականություն և հուզականություն, ստեղծագործ երևակայություն, ֆանտազիա, երաժշտության շարժման մեջ դեպի իմպրովիզացիայի տարրերի սերմանում, որը պահանջում է ունենալ ազատ և գիտակցված մարմին:

Այսպիսով, հակիրճ ուսումնասիրելով քննարկվող խնդրին վերաբերող տարբեր մոտեցումները, նյութի ընտրության և աշխատանքի կազմակերպման համար *մենք*

հիմք ընդունեցինք նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի հետևյալ վերջնարդյունքները՝

է. «կատարում են պարային շարժումներ՝ դրսևորելով ռիթմի զգացողություն և ռիթմոպլաստիկ շարժողական կարողություն»,

ը. «օրվա ռեժիմի ընթացքում կատարվում են նմանակման շարժումներ և ընդհանուր զարգացնող վարժություններ»: Սրանք ներառված են «10-րդ՝ «Շարժողական ոլորտում նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և կրթական վերջնարդյունքներն են» բաժնում, սակայն դրանց զարգացմանը նպաստում են երաժշտության, «Խոսքի և հաղորդակցության ոլորտում նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և կրթական վերջնարդյունքները»:[8] Սրանց հետ ընտրված են նաև ազգային և համամարդկային մակույթի հետ ծանոթացումը երգի, երաժշտության, բանաստեղծությունների և բեմականացումների միջոցով, ինչը առկա է Նախադպրոցական կրթական ծրագրերին ներկայացվող պահանջներում[9]:

Վերը նշածն իրականություն դարձնելու համար կարևոր է համակարգել նաև մեթոդական զինանոցը: Այս նպատակով մենք ուսումնասիրեցինք նաև մեթոդների խմբերը, որոնք հակիրճ ներկայացնում ենք ստորև:

ԳԼՈՒԽ 2. ԵՐԱԺՇՏԱՌԻԹՄՄԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԵԹՈԴՆԵՐ և ՏԵԽՆԻԿԱ

[8] ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ, էջ 5, կետ 11, 2021թ

[9] ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ, էջ 10, կետ 26, 2021թ

2.1. Երաժշտառիթմական շարժումների կարողությունների աստիճանական զարգացում

Երաժշտառիթմական շարժումների կարողությունների աստիճանական զարգացումը իրականացվում է տարբեր փուլերով, որոնցում շարժումը դիտվում է որպես երաժշտական կերպարի հետ կապված հույզերի նույնականացում:

1-ին փուլը երաժշտական և ռիթմիկ շարժումների կարողությունների զարգացումն է՝ հիմնված երեխաների ընդօրինակման ունակությունների վրա: Այս փուլում մենք սկսում ենք երեխաներին ծանոթացնել երաժշտական և ռիթմիկ նոր ստեղծագործությունների հետ՝ ապավինելով երեխաների՝ ընդօրինակելու կարողությանը, որը հստակ արտահայտված է նախադպրոցական տարիքում: *Ընդօրինակելով մեծահասակին*՝ երեխան տիրապետում է տարբեր տեսակի շարժումների և աստիճանաբար սկսում է դրանք օգտագործել ինքնուրույն գործունեության մեջ (խաղերում, պարային իմպրովիզացիաներում): Հետաքրքիր ցուցադրմը օգնում է երեխաներին տիրապետել բավականին բարդ շարժողական վարժություններին: *Միասին շարժումներ կատարելն* օգնում է ընդհանուր բարձր տրամադրություն ստեղծել և հնարավորինս կենտրոնացնել ուշադրությունը, համախմբվածությունը: Համատեղ կատարման ընթացքում կարևոր է թույլ տալ որ երեխաներն զգան իրենց հնարավորությունները և դրանք ի մի բերեն իրենց գիտակցության և հիշողության մեջ: Հետագա կրկնություններով շարժումները զտվում են, մտապահվում և ավտոմատացվում: Իհարկե, երեխաների մոտ դա տարբեր կերպ է ընթանում՝ ոմանց համար ավելի արագ և հեշտ է, ոմանց համար՝ դանդաղ և որոշ յուրահատկություններով: Կարևոր է, որ աշխատանքի այս փուլում *դաստիարակը որևէ մեկնաբանություն չանի*, երեխաների ուշադրությունը չկենտրոնացնի այն փաստի վրա, որ նրանք ինչ-որ բան լավ չեն անում, քանի որ վարժությունների բարդ տարրերը կրկնվում են տարբեր կոմպոզիցիաներում և աստիճանաբար կյուրացվեն:

2-րդ փուլը վարժությունների, շարժումների և կոմպոզիցիաների ինքնուրույն կատարելու ունակության զարգացումն է: Այն բանից հետո, երբ երեխաները ցուցադրական կատարման որոշակի փորձ ձեռք բերեցին և մի քանի ստեղծագործություններ անգիր սովորեցին, դաստիարակը երեխաների մեջ

զարգացնում է նախկինում սովորած վարժությունները, կոմպոզիցիաները որպես ամբողջություն և անհատական շարժումներ ինքնուրույնաբար կատարելու կարողություն: Դա տեղի է ունենում աստիճանաբար, երեխաների համար աննկատ: Դաստիարակը երբեմն համատեղ կատարման ժամանակ ցուցադրությունը դադարեցնում է և երեխաներին հրավիրում՝ ինքնուրույն շարունակելու շարժումները: Սա կարևոր պահ է, ցուցադրական ներկայացումից բացի այստեղ ևս երեխաները մարզում են կամային ուշադրություն, հիշողություն և հետևողականություն: Աստիճանաբար երեխաներին հրավիրում են ամբողջ ստեղծագործությունը սկզբից մինչև վերջ կատարել ինքնուրույն (երբեմն կարելի է հուշել որոշ ժեստերով):

Այս փուլում կիրառվում են հետևյալ տեխնիկաները.

- երեխաների կողմից ստեղծագործությունների կատարման ցուցադրում (ուսուցչի փոխարեն վարող երեխաների ընտրություն՝ հերթով կամ ըստ ցանկության);
- վարժության ցուցադրում սովորական ժեստերով և դեմքի արտահայտություններով (ուղեկցող հրահանգներ):

Մենք սովորում ենք որոշ ստեղծագործություններ, որոնք հարմար են երեխաների զվարճանքի, ցերեկույթների և դրամատիզացված խաղերում հետագայում ներառելու համար: Այս դեպքում ավելի զգույշ աշխատանք է տարվում կատարման որակի վրա, քանի որ կարևոր է երեխաների մեջ սերմանել գեղեցկի զգացողություն, շարժման մշակույթ և ամեն ինչ անհրաժեշտ նվիրումով անելու ցանկություն:

3-րդ փուլը ստեղծագործական ինքնարտահայտման ունակության զարգացումն է, որի ընթացքում երեխաներին ուղղորդում են դեպի երաժշտական նյութի ստեղծագործական մեկնաբանությունը: Այսպիսով, սկզբում երեխաներին հրավիրում են լսել երգ, արտասանել տեքստը, այնուհետև խաղալ «թեստեր», որոնցում երեխաները կփորձեն շարժումներով արտահայտել երգերի բովանդակությունը:

Աշխատանքի այս փուլում մենք առաջարկում ենք կիրառել մեթոդական հետևյալ տեխնիկան.

- երաժշտություն լսել և խոսել դրա մասին, տալ երաժշտական պատկերների բանավոր նկարագրություններ,

- որոշ ստեղծագործությունների՝ բանաստեղծությունների, հեքիաթների, նկարների ընտրություն, որն օգնում է մեկնաբանել երաժշտական կերպարը. երեխաների պլաստիկ իմպրովիզացիաներ, «թեստեր»՝ առանց ուսուցչի ցուցադրման,
- դաստիարակը ցույց է տալիս շարժումների տարբերակներ, և երեխաներին խնդրում ընտրել իրենց կարծիքով ամենահաջողը:

2.2. Ուսուցման արդյունավետ մեթոդների և տեխնիկայի ընտրություն

Այստեղ նախատեսվում է շարժումների վարժեցման ժամանակի ավելացում, այսինքն՝ մանկապարտեզում գտնվելու ողջ ընթացքում ուժեղացվում է երեխաների շարժողական ակտիվությունը երաժշտության նկատմամբ (վարժությունների, պարապմունքների, զբոսանքի ժամանակ, դասերի միջև և այլն)՝ այս ընթացում երեխաներին վարելով ուրախ և գրավիչ ձևերով:

Կարևոր է նաև ընտրել ռիթմիկ ստեղծագործություններ, որոնք թույլ կտան միաժամանակ լուծել տարբեր խնդիրներ: Օրինակ՝ վառ, գեղարվեստական երաժշտությունը, որին երեխաները վարժվում են, զարգացնում է ճաշակը, երաժշտական կարողությունները, մարզում է ուշադրությունը: Պարապմունքների ժամանակ կարևոր է ապահովության զգացման առկայությունը, որպեսզի երեխան սխալ անելու, իր անկարողությունը ցույց տալու վախ չունենա: Ուստի դաստիարակը ձգտում է երեխաներին բարձրաձայն դիտողություններ չանել, այլ խրախուսում է նրանց: Կարևոր է ընտրել այնպիսի նյութ, որը հասանելի է կատարման համար և համապատասխանում է երեխաների տարիքին ու անհատական հատկանիշներին: Հայտնի է, որ երեխաները սիրում են կատարել այն, ինչ հասկանալի է, իսկ եթե նյութը չափազանց դժվար է և անհետաքրքիր՝ ապա, որպես կանոն, մերժում են իրենց անտարբերությամբ: Պետք է ձգտել գրավիչ դարձնել ուսուցման գործընթացը՝ ընտրելով վառ երաժշտություն, շարժական ինքնատիպ վարժություններ, որոնք երեխաների մոտ առաջացնում են հուզական արձագանք, խաղային տարբեր իրավիճակներ և անակնկալ պահեր:

Երեխաների ցերեկույթների ծրագրերում, որպես կանոն, ընդգրկված չեն մարզումային կոմպոզիցիաները, քանի որ դրանք բավականին բարդ են և նպատակը բոլորին շարժումները ճշգրիտ և ճիշտ կատարելը չէ: Հիմնականն այն է, որ երեխաներին հնարավորություն տրվի ձեռք բերել երաժշտության շարժման սեփական ամբողջական զգայական փորձը, հարստացնել իրենց փորձը մի շարք շարժական վարժություններով, հեշտացնել և արագացնել երաժշտառիթմական հմտությունների և կարողությունների զարգացման գործընթացը:

Աշխատանքի մեթոդների և տեխնիկայի ընտրությունը որոշվում է նախադպրոցական տարիքի առանձնահատկություններով և աշխատանքի առաջադրանքներով: Առաջին հերթին սա, իհարկե, բանավոր գործնական մեթոդներ են և տեսողական ցուցադրությունը: Այստեղ կարևոր է պահպանել հմայքի կամ հաճույքի սկզբունքը: Դաստիարակը պետք է կարողանա երեխաներին հմայել իր վերաբերմունքով, շարժումներով, երաժշտությամբ, վարժություններով և ձեռնարկումներով: Դա պետք է դառնա «մեկ մարդու նվագախումբ», որը կարող է երաժշտությամբ, ձայնով, շարժումներով, ժեստերով սահմանել ցանկացած շարժողական գործունեության տեմպն ու ռիթմը:

ԳԼՈՒԽ 3 ԵՐԱԺՇՏԱՌԻԹՄԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

3.1. ԵՐԱԺՇՏԱՌԻԹՄԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Տավուշի մարզի Խաշթառակ համայնքի մանկապարտեզում մենք իրականացրել ենք երաժշտառիթմական պարապմունքներ, որոնց նպատակն է նախադպրոցական տարիքի երեխաների երաժշտական և ռիթմիկ շարժումների զարգացումը:

Պարապմունքը կառուցվել է Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի հիման վրա: [10]

- Խորացնել պատկերացումները հայկական ժողովրդական երգերի մասին:
- Զարգացնել երաժշտությունը ուշադիր ունկնդրելու, մտապահելու և դրան հուզականորեն արձագանքելու ունակություն, կարողություն:
- Զարգացնել երեխաների երաժշտական և ռիթմական լսողությունը՝ մանկական բնական նվագարանների միջոցով, և սովորեցնել պլաստիկ և ճկուն շարժումներ:

Վերջնարդյունքներին հասնելու համար անհրաժեշտ է երաժշտական ստեղծագործությունների ընտրությունը, երեխաների ուսուցման մեթոդների ընտրությունը, որը պայմանավորված է նրանով, թե որ փուլի պարապմունք են պլանավորում (սկզբնական փուլ, խորացված ուսուցման փուլ, համախմբման և կատարելագործման կամ կրկնության փուլ).

Մեր պարապմունքը վերաբերվում է համախմբման և կատարելագործման կամ կրկնության փուլին, որը բնութագրվում է շարժական հմտությունների ձևավորմամբ և երաժշտության ներքո ստեղծագործական ինքնարտահայտմամբ: Այս փուլում անհրաժեշտ է բարելավել վարժությունների կատարման որակը և փորձել երեխաների մոտ ձևավորել անհատական ոճ: Վարժությունների կատարելագործման և ստեղծագործական ինքնադրսևորման փուլը ավարտված է համարվում միայն այն դեպքում, երբ երեխաները սկսում են ազատ տեղաշարժվել զգացմունքային և էսթետիկ շարժումներով:

Ռիթմի վարժությունների ընտրությունը համապատասխանում է երեխաների հնարավորություններին և պատրաստվածությանը:

Պարապմունքի տևողությունը որոշվում է ըստ սովորողների տարիքի (3-4 տարեկան՝ 15-20 րոպե, **4-5 տարեկան՝ 20-25 րոպե**, 5-7 տարեկան՝ 30-35 րոպե):

[10] ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ, էջ 10, կետ 26, 2021թ

Պարապմունքը պլանավորվում է ԽԻԿ կառույցին համապատասխան և բաղկացած է խթանման, իմաստի ընկալման և կշռադատման մասերից, խթանման մասը բաղկացած է դինամիկ բնույթի վարժություններից և շարժումներից, որոնք ազդում են մարմնի բոլոր շարժումների վրա՝ կից քայլք, վազք, ցատք «Նորվեգագան պարի» ներքո: Այնուհետև հաջորդում է իմաստի ընկալման մասը, որը սկսվում է խոնարհման շարժումովև վարժությունները բաշխվում են՝ հաշվի առնելով աճող մարմնի ֆիզիոլոգիական բեռնվածությունը: Պարապմունքի երրորդ կշռադատման մասը ՝ երաժշտական և ռիթմիկ մաս է և այն ամենադինամիկն է: Այն ներառում է պարային շարժումներ, ստեղծագործական առաջադրանքներ, պարային կոմպոզիցիաներ: Առաջադրանքի այս հատվածում երեխաները կարող են ինքնուրույն ստեղծել երաժշտական պատկերներ:

3.2 ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ ՄԻՋԻՆ ԽՄԲՈՒՄ

Երաժշտության դաստիարակ

Աննա Հակոբջանյան

Պարապմունքի նպատակը՝ կրկնել ուսումնասիրված նյութը սովորած երգերի և ռիթմիկ պարերի վերաբերյալ: Նպաստել երեխաների իմպրովիզացիայի և ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

Խնդիրները.

- Կրկնակի ունկնդրել Կոմիտասի «Կաքավիկ» երգը, կիրառելով նվագարանները:
- Երախաները կկատարեն ժողովրդական «Վարդի ծառ» երգը, կիրառելով իմպրովիզացիա:
- Ամրապնդել Է. Գրիգի «Նորվեգական պարը»:

Վերջնարդյունքներ.

- Երեխաները կատարում են Կոմիտասի «Կաքավիկ» երգը, ռիթմիկ նվագակցելով բնական և մանկական նվագարաններով:
- Երեխաները կկատարեն ժողովրդական «Վարդի ծառ» երգը, կիրառելով իմպրովիզացիա, ներկայացնելով իրենց ստեղծագործական կարողությունները:

Ընթացքը՝ երեխաները դահլիճ են մտնում երաժշտական հնչյունների ներքո: Դաստիարակը ողջունում է հետևյալ խոսքերով.

- Այսօրվա կարգախոսը կլինի «Պարիր մեզ հետ որքան կարելի է՝ շատ»:

Երեխաները քայլերգով մտնում են դահլիճ, կատարում են երաժշտական վարժություններ՝ քայլք, քայլքի տեսակներ, վարժություններ, կից քայլք, դանդաղ վազք, թռիչքներ, վերցնում են նվագարաններն ու նստում աթոռակներին (զանգակներ, շխշխկան խաղալիքներ):

Խթանման փուլ: Երաժշտական դաստիարակի նվագակցությամբ կատարվում է «Կաքավիկ» երգն ու երեխաներին տրվում են հետևյալ հարցերը:

- Երեխաներ հիշու՞մ եք՝ ո՞վ է «Կաքավիկ» երգի հեղինակը:
- Ինչպիսի՞ երգ է, ուրա՞խ է, թե՞ տխուր:
- Ո՞վ կարող է երգել նկարագրելով կաքավիկին, ինչպիսի՞ն է նա:

Իմսաստի ընկալման փուլ:

- ✓ Երեխաներին հրահանգվում է, որ երկրորդ ունկնդրման ժամանակ զնգացնեն զանգերը և շխշխկացնեն խաղալիքները երգի խոսքերին համապատասխան:
- ✓ Ընտրեն երգից 3-4 տող և շարունակել երգը բնական նվագարաններով (ռիթմիկ՝ ծափերով, դոփելով):
- ✓ Հետևել, որ երգեն մաքուր և արտահայտիչ հնչի:

Կազմում ենք 2 խումբ.

1 -ին խումբը նվագարաններով (դափ, զանգ, շխշխկան խաղալիք):

2-րդ խումբը պետք է նվագի բնական նվագարաններով (ծափերով, դոփերով):

Երախաները նաև կկատարեն ժողովրդական «Վարդի ծառ» երգը, կիրառելով պարային իմպրովիզացիա: Պարի ընթացքում առաջարկել ամբողջ խմբին կատարել ազատ, ինքնուրույն պարային վարժություններ, միաժամանակ երգել պարելով և պարել երգելով:

Կշռադատման փուլ

Հարցնել երեխաներին, թե՞ ինչը դուր եկավ այս օրվա պարապմունքի ընթացքում, ի՞նչ նոր բան սովորեցին:

Կրկնել Է. Գլինկայի «Նորվեգական պարը», ամրապնելով այն պարապմունքի արաջին մուտքի և վերջին ելքի փուլերում, հետևել, որ պարային շարժումները լինեն սահուն, անթերի, երաժշտության բնույթին համապատասխան, խրախուսել բոլորին:

Ավարտ՝ երաժշտության ռիթմին համապտասխան քայլքով դուրս են գալիս դահլիճից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքի թեման «Երաժշտառիթմական վարժությունները, որպես երեխայի ռիթմի զգացողության միջոց» ներառում է մի շարք կարևոր խնդիրներ, որանք կարևոր են երեխաների անձի ձևավորման գործընթացում և նպաստում են հաղորդակցական, մտավոր, մշակութային, հոգեֆիզիոլոգիական բաղադրիչների զարգացմանը և միևնույն ժամանակ բազմամշակութային գիտելիքների և պատկերացումների ձևավորմանը: Հետազոտությունը հնարավորություն տվեց ուսունասիրելու երաժշտառիթմական վարժությունների դերը և նշանակությունը նախադպրոցական մանկավարժության մեջ սկսած ակունքներից և ավարտված այդ թեմայի արդիականությամբ Հայաստանի կրթական քաղաքանության մեջ: Հետաքրքիր էր նաև այդ թեմայի ամբողջական մշակվածությունը նախադպրոցական մանկավաարժության տեսությաան մեջ:

Այսպիսով՝ հետազոտության մեջ փորձել ենք ներկայացնել Տավուշի մարզի Խաշթառակ համայնքի մանկապարտեզում տարվող երաժշության և ռիթմիկայի դասերի մեր փորձը, որը մի կղմից հիմնված է շվեյցարացի երաժիշտ, ուսուցիչ, դաշնակահար և դիրիժոր Էմիլ Ժակ Դալկրոզի և նրա բազմաթիվ հետևորդների կողմից երաժշտության և ռիթմական շարժումները համակցելու գաղափարի, որը ոչ միայն կազմակերպման իդեալական օրինակ է, այլև կարգավորում է երեխայի շարժումները և հստակ պատկերացումներ է տալիս ժամանակի, տարածության և շարժման միջև եղած հարաբերությունների մասին, մյուս կողմից՝ այն նպատակների ու վերջնարդյունքների հաշվառման վրա, որոնք բխում են Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի մի շարք վերջնարդյունքներից:

Մեր հետազոտության նպատակը իրականացվեց, քանի որ մենք խորքային մակարդակով գիտակցեցինք այդ խնդրի կարևորությունը և այս դեպքում նաև մանկավարժության տեսության և այսօրվա գործնական պահանջների միասնությունը մեր կրթական քաղաքականության մեջ: Ինչ վերաբերում է պարապմունքներին, ապա այս ուսումնասիրության արդյունքում կիրառեցինք վերջնարդյունքահեն մոտեցում և մեր պարապմունքների նպատակները և վերջնարդյունքները բխեցին ուսունասիրած փաստաթղթերից և չափորոշիչներից:

Կարծում եմ այս աշխատանքը իմ գործընկերներին հնարավորություն կտա գիտակցելու երաժշտառիթմական պարապմունքները դիտել ոչ միայն որպես մարմնաֆիզիկական հնարավորությունների զարգացում այլ նաև որպես.

- ✓ սինթետիկ գործունեություն, որի վրա կարող է հիմնված լինի ցանկացած ծրագիր,
- ✓ հնարավորություն զարգացնելու ինչպես երաժշտական լսողական, այնպես էլ շարժողական ունակությունները, ինչպես նաև մտավոր ունակությունները,
- ✓ միջոց, որը ընդգծում է ուշադրությունը, արտիստիզմը, ստեղծագործական կարողությունները:

Այս ամենը մեր կարծիքով կատարվում այն դեպքում երբ դաստիարակը հստակ ձևակերպում է իր գործունեության առաջնահերթ նպատակները և խնդիրները:

Դիտարկումներ

Դաստիարակ

Երեխաները պարապմունքի ընթացքում ունեին բարձր տրամադրություն և անհամբերությամբ սպասում էին դաստիարակի հրահանգներին: Երաժշտական դաստիարակն ուներ պարապմունքին համապատասխան նյութեր, որն էլ ավելի մատչելի և դյուրին դարձրեց:

Տնօրեն

Այս պարապմունքը կարող եմ առանձնացնել իր բովանդակությամբ, որի շնորհիվ երեխաները ձեռք բերեցին հմտություններ, նոր գիտելիքներ: Երեխաների մոտ զգացվեց ինքնուրույնություն, նոր կարողությունների զարգացում: Համապատասխան նյութերն

օգնեցին ավելի ընդլայնել սաների ստեղծագործական միտքը: Պարապմունքը հաջողված էր, պարապմունքի կշռադատման փուլում պարզ դարձավ, որ երեխաները յուրացրել էին առաջարկված թեման:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ օրենքը նախադպրոցական կրթության մասին,2023թ.
2. Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ, 2021թ., էջ 13 http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152575
3. Նախադպրոցական կրթութական ծրագիր միջին խումբ (4-5 տարեկան) 2022թ., էջ 44
4. ՀՀ ԿԳՄՍՆ Նախադպրոցական կրթություն, https://escs.am/am/static/preschool-sdication?s=edu, 2023թ.

5. Կոմիտաս «Պարն ու մանուկը», Կոմիտասի դասախոսությունը Պոլսի Յեսայան դպրոցում, 1912թ
6. Մարության Ս.Ա., Դալլաքյան Ա.Մ., Նախադպրոցական մանկավարժություն Բուհական դասագիրք, Երևան, «Գասպրինտ», բուհական դասագիրք, 2008թ. 288 էջ